Եւ այն, որ հայ հոգեմտաւոր բացառիկ ճիգն ի վերջոյ արժանացել է համամարդկային մեծ ուշադրութեան եւ բարեհաճութեան ու այսպէս անպատասխանատու կերպով վիժեցւում է մեր մեղքով, ի հարկէ, ոչ մի արդարացում չունի, եւ ուղղակի կարճամտութեան դրսեւորում է։ Արդարացուցիչ չէ նրանց կատարածը, ովքեր հարցը մատուցում են այնպէս, թէ իբր Քուչակին մեծարողները կեղծ փաստերի ու ազգային արժէքների նենգափոխման, իսկ որոշ դէպքերում էլ չիմացութեան ճանապարհով են ստեղծել բանաստեղծի համբաւը եւ նրան ներկայացրել իբրեւ մեծութիւն, ինչին նա արժանի չէ։ Իւրաքանչիւր քուչակագէտ, որ համակրում է նրան ու պաշտպանում, ելնում է մի շատ կարեւոր սկզբունքից։ Դա հետեւեալն է. այն, ինչ ստեղծել է Քուչակը, անհատական բարձր բանաստեղծութիւն է՝ արժանի մեծ ուշադրութեան։ Ժողովրդական բանարուեստի ազդեցութիւնները նրանում նկատելի են, սակայն տիրապետողը անհատականն է դրանցում։ Զմոռանանք, որ բանաստեղծն իր ժողովրդի յոյզերն ու զգացմունքներն է փոխանցում գրականութեանը։ Այդ է այս հասարակ ու հանճարեղ աշուղի «մեղքը»։

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ընդվզումը երբեք լսելի չդարձած մարդոց լեզուն է։

Գերեզմանները լի են... անփոխարինելի մարդոցմով։

Կատարեալ ընթերցողը՝ լիակատար անքնութեամբ տառապող ընթերցողն է։

Ան, որ բան մը չըներ, մշտապէս շատ օգնականներ կ'ունենայ։

Աշխարհը կը կառավարեն հասակ առած երիտասարդները...

Իշխանութիւնը առատութենէն ճաթող այն սեղանն է, որմէ ոչ ոք կամովին չի հրաժարիր։

Ախտորոշումը այնպիսի յաջողութիւններու հասած է, որ առողջ մարդ, ըստ էութեան, չէ մնացած։

Անկեղծ ու անկաշառ բարեկամութիւնը հնարաւոր է հաւասարաչափ եկամուտ ունեցող մարդոց միջեւ միայն։

Գիրքեր այրելէն աւելի սարսափելի արարք ալ կայ՝ չկարդալը...

Ազատութիւնը ինքնին ոչինչ չարժէ, եթէ այն իր մէջ չունի նաեւ սխալելու ազատութիւնը։

Խիղճին առնչուող հարցերը ձայներու մեծամասնութեամբ չէ, որ կը լուծուին։